

ՇԵՓՈՐ

Литературный, общественно—политический
экономический еженедельный журнал

ШЕПОРЪ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊ.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ЦѢНА 7 КОП.

Временный адресъ: Баку, Б. Морская, д. Межлумова, кв. № 10 Редакция „Шепоръ“

№ 15

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի

№ 15

Բանուոր ընկերներ, տարածեցէք ձեր „Շ և ֆ ո Ր“ը

ԲԱՏԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԳԻԱԳՐՈՒԹԻՒՆ
I I-րդ 1909 թ. Տ Ա Ր Ի

„Շ Ե Փ Ո Ր“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

	Բազուխ և յրջանում	Բազուխից դուրս	Արտասահման
12 ամիս	4 ա. —	5 ա. —	8 ա. —
6 ամիս	2 ա. —	2 ա. 50 կ.	4 ա. —
3 ամիս	1 ա. —	1 ա. 25 կ.	2 ա. —
1 ամիս	— 40 կ.	— 50 կ.	— 70 կ.

Յայտարարութիւնները՝
Առաջին երեսում—տողատեղը՝ 15 կոպ.
Վերջին երեսում—10 կոպ. կրկնուղ յայտարարութիւնները առանձին պայմանով:

1909 թ. համար հիմնականից տարեկան բաժանորդ գրուողները, գրած օրանից մինչև 1909 թ.ի յունւար, թերթը ստանում են ճիշդաւոր:

Այն տարեկան բաժանորդները, որոնք բաժանորդագրւած են մինչև 1909 թ.ի մարտի 1-ը, կարող են ուղարկել՝ Բազուխ և յրջանի բաժանորդները 3 ռ. 30 կոպ., օտար բազարներինը—4 ա. և ստանալ թերթը մինչև 1909 թ. վերջը:

Գիմել՝ Баку, Редакция „Шепоръ“.



Ր Ա Ք Ի Ի Բ Ա Փ Ա Ն Ս' Ո Ի Ն Ք
ՄԽԱՌՏԱԳՈՐԾԱՐԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ե. Ա. ԿՈՒՑՆԱՐԵՒԻ.

Նոր լոյս են տեսել հետևեալ պապիրոսները՝

«Прогрессъ» 20 штукъ 15 к.	«Реформа» 20 штукъ 6 к.
«Анастасъ» 25 » 25 к.	10 шт. 10 к. «Арабскія» 20 » 5 к.
«Капъфинъ» 25 » 15 к.	10 » 10 к. № 6' 20 » 5 к.

Մախուճ են բոլոր ժխտաբանականների մասը Գլխավոր դահլիճը՝ Меркурьевская ул.,
д. Цатурова № 10. 50—2

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Քննադատութեան կողմից. Արհեստակցական խնդիրներ—Ա. Ասլանեանց. Հարաբարի շերամա-
պան գիւղացութիւնը, մշտապաշարժարանատէրերը և նրանց բանւորութիւնը—Ա. Սուրէն.
Աշխատանքի տները.—Շեխ. «Անկուռակցական» սպառողական ընկերութիւնը—Компас. Բանա-
սիրական. Ո՛րն է թշնամին—Սօթուր. Մամուլ. Աշխատաւորների կեանքից, Թղթակցութիւններ.
Յայտարարութիւններ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Տարին՝ մտանում է իր վախճանին: Բոլոր խմբագրութիւնները կոչ
են անում լայն հատարակութեանը բաժանորդագրելու իրենց հրատա-
րակութիւններին:

«Ճեփորն» ուղղում է իր կոչը ոչ թէ միջդասակարգային հաւա-
րակութեան, այլ յատկապէս բանւոր ժողովրդին:

«Ճեփորը» բանւոր մարդու բողոքի ձայնն է՝ բռնութեան ու կեղեք-
ման դէմ:

«Ճեփորը» միակ օրգանն է հայ լիգուով, ուր բանւորը կարող է
անկաշկանդ կերպով արտայայտուի:

«Ճեփորը» համախմբել է իր շուրջը և դաստիարակել է բազմաթիւ
բանւորներ, որոնց զրիչը ցոլացնել զիտէ աշխատաւորութեան տան-
ջանքն ու տենչանքները:

«Ճեփորն» աշխատել է մտցնելու հայ աշխատաւորին միջազգային
բանւորութեան մեծ ընտանիքի մէջ:

«Ճեփորը» մերկացրել է և պիտի մերկացնի բուրժուազիայի և բուր-
ժուական ինտելիգենցիայի դուրսը աշխատաւորութեան դէմ:

«Ճեփորը» պիտի շարունակի իր գործը, հնայած նիւթական տուղ

կացութեան, շնայած գերաշխատութեան, շնայած բանւոր ժողովրդի վրայ իջած ծանր մղձաւանջին:

«Ընկիորի» խմբադրութիւնը մի կողմ ունի միայն անելու հիմա, հայ բանւոր պահպանիք ու սարածիք քո «Ընկիորը»:

ԱՐԼԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1

Փողիացում, տարբալուծում ու բաժանում նոր կուսակուցութեան, միացումների ու հաւաքումների համար:

Այսպէս կարելի է յասկանել աշխատաւորական արդի կացութիւնը նաւթաշխարհում:

Ասեմով ամուր ու կենսունակ հիմնարկութիւնները իրենց գահազէժ անկման օրերն են ապրում: Մի շարք խմբակցութիւններ ու կազմակերպութիւններ, որոնք քիչ տարիներ առաջ մասսաներ էին շարժում, քաղաքական բեկակցիայի և անձնասական տազնապի ծանր հարածների տակ հազիւ են քաջջուժ իրենց անյոյս ու անյոյս գոյութիւնը: Սակայն քաղաքական ու անտեսական աննպատակ հանգամանքները չեն պիտուորապէս որ առաջացրել են այդ խմբակցութիւնների վրայ իջած կապարէ մղձաւանջը: Վերացել է հաւատը դէպի այն ամենը, ինչ որ քիչ առաջ էին դաւանում: Ջգրացել է յարթական վստահութիւնը դէպի սպա-

զան և դէպի սեփական առաքելութիւնը:

Աշխատաւոր մասսան, որը մի ժամանակ լախ շերտերով շրջապատել էր այդ կազմակերպիչ կորիզները, այժմ տարով նրանց և այժմ աննկով նրանցից, այժմ արդէն, երբ այդ կորիզները կորցրել են իրենց ձգող ոյժը, սկսել է փոշիանալ, տարբալուծել ու բաժանել:

Բանւորութիւնը, իբր ամբողջութիւն, իբր դառակարգ, իբր մի որոշ դաշտափար կրող և մի որոշ մարտ մղող հասարակական խաւ, դարձել է մի զանցառական քանակ և տեղի է տւել ցիւրացան բանւորների անձն ու անամբողջական մասսային, որոնցից իւրաքանչիւրը իր շահն է պաշտպանում երբ կարողանում է և ինչպէս կարողանում է:

Բոլոր պարտաւոր դասակարգերի վիճակն է դա:

Սրբ ճակատամարտի մէջ սարսափեցուցիչ ցայտունութեամբ յայտ եկաւ իրերի իսկական դրութիւնը, երբ զգալի դարձաւ, որ պատրանքն ու կորովը աւելի շատ էին քան արա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Ո Ր Է ԹՇՆԱՄԻՆ

Մեր կեղը շատ խաւար կեղ ա, ընենց մի լաւ գիր գրողացող մարթ չիլայ՝ որ ոնց Թարս-Թարս պաներ պատահումաւ, կեար մի խելք շունց տար չիհասկացողին, որ նա էլ իրան եօլա քընայու գուռը քթնի: Իուզն առած մին լաւ պան իրակացողն էլ ինձ են հետար անում. համա էնքան տանջւեցի չկրացի կիրափառ խօսքեր քթնիմ որ լաւ կրիմ: Մի երկու անգամ հանգուցեալ սկստակի ժըմանակը զըրեցի մեր կեղի դրութիւնից, լըտպեցին, ընտեղ իմ հետարովը կըրափառ եմ կիրել, հայրաթ հաւան չին: Ի՛նչ ես նրանից առել չեմ գիգում, հուսումով մարթ էլ ամարա քթնում կեղ տեղը. մեր կիրածն էլ չեն տպում, թէ կրենք ոչ անարթարութիւնն շատաւ սրտէքնիս դարուլ չի անում: Էնքան ասրիս մեր կեղիցը կազէթումը հետս գորմի իրան հօրը մի հետ «Ընկիորի» №10-ումը սփահլաւ անումով մի մարթ կիրելաւ, համա, ես տեսումեմ որ էս մարթըղուզ պանն էլ վըթ-վըթ-լոպա ա կըրել: Նա առումա արիւնկեր պա-

րոնները, իմացան ու սուզում են, որ մեր հընգերութիւնը իրփանեն՝ համա վախումա թա էտ մըթկերանց անումը տայ իրան գաղտը աննն: «Լեզի տակին սուր ոսկոր չկայ»: Էտ մըրթկերանց անուններն է. Ալլամ, Սըրեմ, Արմենակ և Մուսէս Աղաջանեանցներ կամ (Պարսեղանց): Էտ չորս տիպերտիքը էտ մին առն նա, որ մեր կեղցունց կրակին են անել էրում, որ ու թըշեր էլ քուն ու թաթար շոճնն. ուզում են կեղցիներին ընկէնց աննն որ էլ իրանք իրանց համար չմասծեն ստում են մենք ձեզ ինչ որ ստում ենք մեզ լսեցէք ու սոգած չէք միալ: Ասրիներն էլ էնա չոր հարուստներին սփեղիցը՝ փունցէք ու ոչ մի հնգերութիւն միք ճնանչիլ, նրանք եղ կըրտափեն, եր փոցերը կուտեն և շատ ուրիշ խօսքեր... Մի կողմից էլ մեր կեղիցը մի քանի երիտասարդներ էլ կեղըցիների մէջ են մըտել քարուզում որ սեթէ մեզ լսէք ձեր քրիտէքը և դուք ըղկէնց գծար չէք ապրել: Լըմի էտ երիտասարդների ու մեր կեղի տէր խաղէյների՝ մէլ մեծ դաւի-դարարայ կայ: Խաղէյները կեղըցիներին ստում ին ամենք ենք ձեր պարեկամը՝ հնգերութուն քարողոզներն էլ ստում են ամենք ենք ձեր պարեկամը: Լիմի խեղճ ու ըսկի չըհակացող-բաի աշխար չը տեսած կեղացիք միտ-

ժողովրդի բնալ ոյժը—սկսեց նաճանջը, անկա-
նուն ու անկազմակերպ, ջտալ ու յուսահատ:
Այդ նաճանջը սակայն, որովհետև նա կատար-
ւել էր տարբերային անկախ շարժումներով,
դուրս նետեց բանւորութեանն ոչ միայն այն
վերջերից, որը նրանք չէին կարող պահպանել
հասարակական ոյժերի արդի դասաւորման մէջ,
այլ և այնպիսի դիւրբերից, որոնց պահպանու-
մը հնարաւոր էր, անգամ անխուսափելի նա-
հանջը կատարելուց յետոյ:

Հիմա հաստատուել է արդէն մի որոշ
սեւաւատարակչութիւն՝ հասարակական ոյժերի
յարարեթուծեան մէջ և իւրաքանչիւր դասա-
կարգ բանել է, կամ աշխատում է բանել կեան-
քի մէջ այն տեղն ու դիրքը, որոնք համապա-
տասխանում են իր տնտեսական և քաղաքա-
կան իրական կարողութեան:

Բանւոր դասակարգի ամենից զգայուն ու
գիտակից տարրերը, հիմնական վերադասակա-
ման ենթարկելով բանւորական շարժման ցայ-
ժլմ գոյութիւն ունեցող բոլոր ձևերը, սկսել
են որոնել այն նոր կորիզները, որոնց շուրջը
հնօրաւոր է հիմա մասսաների համախմբումն
ու բիւրեղացումը:

Այդպիսի մի կորիզ է նոր արհեստակցու-
թիւնը:

Նա նոր է, որովհետև իր կազմով ու ու-
ղով չի յիշեցնում բնաւ նախկին միութիւննե-

ցել ենշարած չին գիտում որն է իրանց պա-
րեկամը որ նրանց լսեն չըմի էս անքամ էս
չեմ գիտում պ. պ. Ազաջանեանցների, պոլոր
արած անարթարութիւնին թէ քանի մարթու
են անմեղ, տեղը թակել, քանի ջուռայ-
անարդարութիւննի են արել քանի ընտանիք են
հացից դրկիլ, էզ թողնում եմ ուրիշ անքամ-
վայ չմի գնանք տեսնենք դրանք կարող
են կեղցրիների պրեկամը դառնալ... Ոչ կեղացիք
ատում են խազէին Ազաջանեանցները մեր պրե-
կամն են, նրա համար որ իրանց մի շինու-
թիւնը մեզ են բաշխել աշխօլի՞ համար ու
դրա համար բուզում չինք բեղամաղ անեն
մ նացել ենք կալ կուպած՝ շինութիւնը աալու
պատճառը նա ա, որ դուք մի շինութեանս
սարքիցիք ու մեծով պուռուրով ծեռք քաշեցիք
որ նրանց կեղիցը դուս անէք, ու էզ շինու-
թիւնը աւին որ ձեր տղերը սալ ու հացով
փռնեն որ իրանք մեան կեզումը ձեր արինը
ծըծեն, Սթէ ուզում էք ձեր ըրէխեքը զրել,
կարթալ սվորէն, ձեզ համար մի «շխօլ» շինե-
ցէք, կամ աւէք, ու նրանցից կզրծնէք էն
ժախարչ, եփ որ ձեր «շխօլը» ձերը կլի, աշա-
խօլն հասարակութեանը: Տուք ասում էք մեր
պարեկամներն նրա համար, որ մեզ կործ են

բի կազմն ու սղին, որոնց միջնականն ու
անմնացորդ միաձուլումից ինքն առաջ է եկել:

Այդ արհեստակցութիւնը մի ամբողջու-
թիւն է, ունի իր ուրոյն ուղին ու վերջնական
նպատակը և չէ ներկայացնում իրենից շեղ յա-
ւելածը, կամ օրգանը, որիւ է ուրիշ կարգի իրմ-
բակցութեան: Նրա ուղին ինքնամիտի և յուզ-
թական վերելքի ճամբան քայլող սեփականու-
ղուրկ աշխատարութեանն դասակարգային ու-
ղին է իր ծայրանկ ու անադարտ արտայայ-
տութեան մէջ և նպատակը, վերջին հուշով
գտնել, վարձու աշխատանքի գերացումն է: Որև
է քաղաքական կազմակերպութիւն հնարաւո-
րութիւնը և իրաւունքը շարժի ունենայ շահա-
գործելու այն իր նպատակների համար:

Նրա մէջ իրար պիտի բազխեն և ջան-
կալի է: որ իրար բազխեն մի շարք հասանք-
ներ, որոնք ձուռնու են առել ոչ թէ կուսակցա-
կան պատկանելութիւնից, այլ արհեստակցա-
կան նպատակագրութիւնների և գործելակեր-
պի տարրեր ըմբռնողութիւններից: Այդ հա-
սանքները իրենց քանակական յարաբերու-
թեան նամեմատ ներկայացուցչութեան իրա-
ւունքն ունեն արհեստակցութեան բոլոր վա-
րիչ ու գործադիր մարմինների մէջ:

Նոր արհեստակցութիւնը մի է և անբա-
ժան, որովհետև ընդհանուր ստամբ անբաժան
են նաւթ արտահանող, մշակող և նախահան-

տալիս Մեզ նրա համար են կործ աալիս, որ
ծեղանից 12 վերս գէնը «Պիլուսը» ուրիշ փո-
ղրաթշիկները փէտի սաղինը 20 Ֆեթով են
առնում, իսկ Ազաջանեանները ծեղ աալիս են
սաղինը 4-5 Ֆեթ: Չմեռը «Պիլուսը» մշակ-
ների օրականը բլումա տաղը շահի, մեր կե-
ղումը հինգ շահի, ամառը ուրիշ կեղերում մը-
շակին աալիս են մի մանկթ, կամ վից արատի,
մեր կեղումը տաղը շահի, Տհնում էք ինչքան
են ձեր մէջքիցը փող աւնում, ում համար ք-
ղինց պան անիք ծեղ դուք կըտայ:

Ի՞նչ ասում էք ամար ժմանակը մեզ
փող են հառցնում, Համայ գլխի էք բնգնում
թէ մի մանկթին քանի կապէկ շահ են նաու-
ցնում *) դուք կլիսի էք նրա համար, որ ծեղա-
նից նաղզ փողով չին առնում, (ձեզ պնջնում
են կամ ձեզ հետ առուտուր անում,) քանի-
քանի մրթկերանց անկ գիտէք, որ էնքան
պարտքերը շահ է արել, որ էլ չեն պրծնում
զղեր ցերեկ նրանց համար պան անկուց:

Ի՞նչ ասում էք հայ, թուրքի կուր ժրմա-
նակը մեզ պահեցին: Ոչ թէ մեզ պահեցին, մե-
զանից փող աշխատեցին գէնց պտան ու մէկին
հինգ աշխատանքով ձեզ ծախեցին. քանի քա-

(ծեթ: հաշած ունիմ ՅԹ, մինչև 50-60շահ է կլ

քային մերենապարծութեամբ պարտապաշտ աշխատանքների անտեսական շահերը Առանց-առաջինների աջակցութեան վերջին երկու կտրիկորիների բանւորները չսիրտի կարողմանս որեւէ չափով թարւոքի իրենց անտեսական վիճակը, որովհետեւ նախահանքային կապիտալիզմի համար ամենից արդիւնաւետը, ուրիմն է և ամենից էականը նախահանութիւնն է և ոչ թէ նախի մշակումն ու արհեստանոցային մեքենադարձութիւնը, և այն զիջողութիւնները, որը նա անում է բանւորութեան, սեղի են ունենում սովորաբար ստալին և ոչ թէ վերջին երկու բանւորական կաթեղորինների նշման ասի. միւս կողմից նախահան բանւորները, յանձինս մերենապարծ բանւորների, ձեռք կրելն բանիմաց ու ձեռներեց մարտակիցներ, որոնք իրենց մասնակցութեամբ նոր արհեստակցութեան մէջ անչափօրէն կզիւրացնեն նախահանքային կապիտալիզմի դէմ մղելիք անտեսական կոռիւր:

Նոր արհեստակցութեան օրէնսդիր մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովը է, որն ընտրում է մի գործադիր վարչութիւն. վերջինս զնկազարում է իր գործունէութեան մէջ այն սկզբունքներով և ցուցմունքներով, որը ստիպ է ընդհանուր ժողովը: Իբր միջանցական օրակ վարչութեան և ընդհանուր ժողովի միջև գոյութիւն ունի պատահականների պարբերական համագումարը, որի նպատակն

նրաի կրթան կովն ու լեծական հղը ծեր աշքի ստալ ջշեցին սարան տարակ թողեցին առնը շոր ու ցամաք մ նացին. ըրիխքը:

Էջանից հտով գիշամ ինչ ըք ասելու դուք ասելու էք որ նրանք չորս ախպերներ էն համ էլ հարուստ են, մենք վախում ենք:

Համա դա էլ տարտակ խօսքէ նրանց որս ախպեր են համայ մեր կեղը 200 առնա սը դրանցից 100 լաւ ալայ միանայ, նրանք էլ կը դառնան հարուստ ախպեր: Ի՞նչ կանին էն վախաը նրանք. ոչինչ: Ախ մեղ էրել, խրօվել են հարուստները, մեր առնը քանզի են մենք բխարար, մեր սիրտը մոյց չի, մենք մըխկաայ չենք պիտում, մեր ու մեր ըրելանց համար: Ասելիքըն էն ա, որ ինչքան ուզում են անուշ ըգու պընցնեն, հարուստները ոչ քաթիբի պարիկաան են ըլել, ոչ էլ ըլիլու են:

Ինչպէս առաջն ասում է, «Երեսնանց դմակ, դրկընանց գունակ» Գրանք այնպէս են. հա էնի ասում, որ մեր էս պանւորներին և կեղացիներին, պարեկամ չի կայ. նրանց պարեկամը իրանց հասկանալն ա. թող լաւ ըըննեն ու հասկանան էրկու կողմերի ստածելը, էն ժըմանակ կըճանաչին որն է թշնամին...
Սովոր

է կօնկրետացման ու մանրամասնացման ենթարկելու ընդհանուր ժողովի ցուցմունքները, որոշումներ կայացնելու այնպէսի գործնական խնդիրների մասին, որոնք շուտափոյթ լուծում են պահանջում: Աւելորդ է շեշտել առանձնապէս, որ պատահականների համագումարը և գործադիր վարչութիւնը պատասխանատու են ընդհանուր ժողովի առաջ և սյս վերջինիս անվտանգութեան ջէլի դէպքում պաշտօնանկ են լինում անմիջապէս:

Արհեստակցութիւնը, միաձոյլ ու ամբողջական, բաժանւած է պրօֆեսիօնել սեկցիաների, որոնցից իւրաքանչիւրը ունի իր սեկցիօնական յունձնաժողովը: Այդ յանձնաժողովը, ընտրւած նեղ արհեստակցների ընդհանուր ժողովի մէջ, պարապում է իր նիւղի բանւորութեան դրութեան ու կարիքների մանրամասն ու հիմնաւոր հետախուզութեամբ: Նա իրաւունք ունի իր անդամներից յաւելեալ անդամավարներ վերցնելու, որից գոյացած գումարի մի մասը նա մտցնում է ընդհանուր արհեստակցական քանձարանի մէջ, իսկ միւս մասը գործադրում է իր գործադրել կամ գործադուլաւոր անդամների օգտին:

Նոր արհեստակցութեան բոլոր անդամները իրենց ամսավճարները—բացի յաւելեալ ամսավճարից—մտցնում են ընդհանուր քանձարանը:

Մենք աշխատակցինք սալ գալիք հիմնարկութեան սոսկ ուրազիքը:

Միացնելով իր մէջ բոլոր ազգերի ետանդուն ու բանիմաց բանւորներին, մէկգի հրելով գանազան խմբակցութիւնների ղեկավարական յաւակնութիւնները, հրատարակելով գիւքը մի ամբողջութիւն, որն անկախօրէն չի նպատակին է հետապնդում—նա կդառնայ նոր ու կինսունակ կորիզը, որի շուրջը լայն շերտերով կրկուտակեն բանւորական մասսաները, որի մէջ ժամանակի ընթացքում կըմշակել պրօլետարիատին դասակարգայտուկ իդէօլօգիան:

Լիովին գիտակ այն հանդամներին, որ անտեսական յարաբերութիւնները անհամեմատ աւելի զօրաւոր են քան ամենից խորիմաստ իդէօլօգիաները և ամենից ոգեշունչ վարդապետութիւնները, որ մօզական գաւազանի անակնկալ մէկ հպումով չէ որ պիտի կատարել բանւորական լայն խառնրի փարուժը՝ պրօլետարական հիմնարկութեան—նա գերծ կլինի երազականութիւնից, կզնէ իր գոյութիւնը իրականութեան պակասով հիմերի վրայ իրերայ շորդ յաղթութիւնների—մաւալ և շարտաւթիւնների—միջոցով կաշխատի հարդել իր առաջխաղացութեան ուղին:

Ա. Աշխատանց.

ՀԱՐԱՐԱԳԻ ԵՐԵԱՄԱԳԱՀ ԳԻՒՂԱԾԻՈՒԹԻՒՆԸ,
ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ
ԲԱՆԻՈՐՈՒԹԻՒՆԸ:

IV

Շերամազան գիւղացիութեան կատարեալ պարտութիւնը հետեւալ տարին էր, երբ նաց- իօնալ գէմօլրատեան ընդունելով «Սօցիալիս- տակ. ծրագիր», հենց իր սօցիալիստական գործունէութեան անդրանիկ փորձը կամեցաւ կատարել գիւղացիական լաշխարում, կազմա- կերպելով «մի. շարք շերամազանական գիւ- ղացիական միութիւններ»:

Օրգանական ստեղծագործող աշխատանքի շերամ կողմնակիցները, բողոքող, դէպի ձախ թէքող տարբերին «ամաշացնելու» առյազ ծարաւին յագուրդ տալու ձգտումով, գիւղերն ուղարկեցին մի խումբ թեմական գաբոցի ԱՆ-րդ — IV դասարանցի «սօցիալիստ պրապանդան- դիստներ», որոնք պիտի կազմակերպէին այդ միութիւնները և ապացուցէին ամբողջ աշ- խարհի առաջ, որ «հնարաւոր է դաշնակցու- թեան մէջ դուռ սօցիալիստական գործունէու- թիւն կատարելու»:

Բացի շերամազանական գիւղացիակ. մի- ութիւնները, նրանք պէտք է կազմակերպէին նաև գործարանական 'րանւորութիւնը, որը մեծ կապ ունի յիշեալ միութիւնների հետ: Գոնէ այդպէս հրամայւած էր և մզ իրա- տւանք ունէր չկատարելու այդ հրամանը:

Թեպէն լահեմները գործ անելու անկեղծ ցանկութեամբ ողևորւած մտան գաւառ և ըս- կանցին կատարել իրենց «սօցիալիստական» միսիան:

Բանւորութեան վիճակը նրանք ոչնչով չկարողացան բարւոքել, որովհետև ուզում էին միանգամից «ВЪАТЬ ԵՄԿԱ ՅԱ ԲՈՂԱ», որը շատ հասկանալի պատճառներով նրանց չյաջողեց և բացի մի քանի վիճակագրական մարզան- քներից, առանձին հետևանքներ չունեցաւ նը- րանց անմեզ աշխատանքը:

Գալով շերամազաններին, պէտք է խօս- տովանել, որ նրանց գործունէութիւնը խիստ «բեղմնաւոր» էր:

Ինչպէս քիչ առաջ ասացի, օրգանական աշխատանք կատարելու ձգտումը մէկ և նա- խորդ տարւայ կազմակերպութեան ընկած պրեստիժի բարձրացման անհրաժեշտութիւնը մի այլ կողմից, ստիպեցին ազաւատեան ամ- բողջ կազմալի հեղինակաւոր միջամտութիւնը և արդէն ձեռուայ ամիսներին լուրջ կերպով մտածուած էր շերամի սերմ գունդու մասին:

Գործարանատէրերին պատժելու միակ և հզօրագոյն միջոցը՝ Գա իսկապէս խոշոր գիււտ էր «սօցիալիզմի» շրջանը նոր թիւակո-

խող կազմակերպութեան համար:

Սերմ ձեռք բերեց ի հարկէ «չիղափո- խական» ճանապարհով և բաժանեց գիւղա- ցիներին: Սակայն ոչ բոլորին: Սերմ ստացան նրանք, որոնք ցանկացել էին մտնել «շերամա- զանների միութեան» մէջ, թէև այդպիսին փաստօրէն գոյութիւն չունէր իրականութեան մէջ: Շերամազանների ճնշող մեծամասնու- թիւնը, դրա հետ միասին և համայն թրջու- թիւնը՝ բացառութեամբ միայն մի փոքրիկ թուրք գիւղի (Ղշաղ) մնացին առանց սերմի: Նրանք ստիպւած դիմեցին գործարանատէ- րերին, իսկ գործարանատէրերը բացարձակ կիրպով մերժեցին նրանց՝ (հայ շերամազան- ներին) պարզապէս յայտարարելով, որ— «Այլ ևս ձեզ հետ ոչ մի գործ անել չենք կարող, գնացէք Գաշնակցութեան մօտ»:

Ատերևոյթ դիտողի համար այս անգա- մանքը շատ սովորական կարող է համարուել, բայց մի ամբողջ աշխատաւորութիւն սարկա- ցնելու տեսակէտից մի գօրծող միջոց էր որին դիմեցին գործարանատէրեր կապիտալիստներ- րը և տնտեսական մի սոսկալի հարւած հաս- ցրին շերամազան գիւղացիութեան խոշոր հատ- ւածին: Նրանց աւելի խեղդելու, ընկճելու հա- մար գործարանատէրերը իրենց ունեցած բօ- որ լու տեսակի սերմերը բաժանեցին թրջ- քերին՝ որպէս շնորհ, որպէսզի յենկով նրանց ազիտութեան մրայ, աւելի շահագործել կար- դանան նրանց, իսկ մնացած թափթփուկները, հայ շերամազանների թախանձագին խըն- դրանքներից յետոյ բաժանեցին նրանց, որոն- ցից, սակայն, դուրս եկած որդերը, ոչ միայն բօժօժ չարին, որից գիւղացին կարողանաւ օգուտի այլ և նրա ունեցած տերևները սպա- սելով, բոլորը կտտորեցին՝ բօժօժ անելու նախօրեակին:

Գաշնակցութեան բաժանած սերմերից գոյացած բօժօժը նորից գործարանատէրերը չկամեցան, վերցնել, պատճառաբանելով, որ նախ՝ նրանք առանց այն էլ շատ սերմ են բաժանել և այդքանից գոյացած բօժօժները հա- վիւ կարողանան տանել և ազա, որ Արտա- սանմանում իրրև թէ ընկել է մետաքսի աբ- ժէքը: Դրա մէջ կատարելապէս համոզելու հա- մար, նրանք չզլացան մինչև իսկ կեղծ հեռա- պիքներ ցոյց տալ, թէ շերամազաններին և թէ մանաւանդ Գ-նը, որը շահագործուած էր այս դէպքում, աւելի, քան մնացած բոլոր շերամա- պանները միասին:

Պրեստիժի խնդիր կար մէջ տեղ: Դ-նը լարել էր իր բոլոր ընդունակութիւններն ու ե- սանզը, իրագործելու իր առաջարկը— այն է, իր սերմերից գոյացած բօժօժը վերցնել տալ նրանց փութը 20 բուրդով:

Իրենց յաղթանակը շերամապանների և մանաւանդ Դ-եան դէմ աւելի կատարեալ գործնելու համար, գործարանատէրերը անդրդուի ճապարհ իրենց որոշման մէջ:

Քաղը սկսել է արդէն, շատերը 5—6 օր է, որ բոժոժը քաղել էին և թիթեռնական էր լինում: Ենթամապանները դժգոհում են, թէ թնշու Դ-նը միջոցների շէ դիմում, որ իրենց բոժոժները վերցնեն գործարանատէրերը, իսկ Դ-նը՝ գլուխը կորցրած թիթեռնական լինելու վտանգից, քանակցութիւններ է սկսում ներանց հետ և ուզում է անպատճառ համոզել, որ բոժոժները վերցնեն այդ գծերով:

Յանկարծ խզում է յարաբերութիւնները: Մինչև այդ իրարից անջատ գործող գործարանատէրերը համերաշխութեանդաշն են կապում միմեանց հետ և կազմակերպւած բազում գուրս գալիս թշնամու հանդէպ կուռնու: Դ-եան սպառնալիքները, թէ—սեփական շորացնելու մեքենայ կ'ը բերնը բոժոժները շորացնենք և յետոյ աւելի թանկ գնելով ծախենք—գանձուում են այդ բազմի մասը պատերին և փշրում, օղը ցնդում:

Հրապարակի վրայ մնում են խեղճ ու կրակ շերամապանները՝ գերի իրենց արտագրած բոժոժի ձեռքին:

Իրերի այդ օրինակ անմիտքար դրութիւնը, ի հարկէ, խիստ վատ է ազդում շերամապանների վրայ և նրանք հրաքափուելով, Դ-ից, յետ վերցրին փողոցում գործարանատէրերի հասցէով արտայայտած խիստ խօսքերը, սկսեցին բռնել և ոչխարային հեզութեամբ ինչդրել նրանց, որ վերցնեն իրենց բոժոժները՝ ինչ գնով կ'կամենան նրանք:

Բազան այդ օրինակ անողորմ կերպով փշրելուց յետոյ, դասակարգային կաւի ջատագով մասաների մէջ ժողով կուսակցութեանը ոչինչ չէր մնում անել՝ բայց միայն հետեւի այդ «այլասեւեւած» հօտին:

Նշովմած ճակատադիրը այս անգամ էլ հեզնեց նրանց, այստեղ էլ նրանք ֆիասկո կրեցին:

Այդպիսով վիժեց Դ-եան. անգրանիկ և միակ սոցիալիստական գործունէութեան փորձը և օղը ցնդեց իր ժամանակին Դ-եան օրդաններում այնքան աղմուկ բարձրացնող «Ենթամապանների միութիւնը», որի գոյութիւնը փաստ էր և հանանչում էր միայն նրա դժմագոգների կողմից և որը իրականութեա մէջ կատարեալ ֆիկցիա էր:

Ընկաւ Ռուսաստանի ազատագրական շարժման բարձմտը: Բէկակցիան կամաց—կամաց սկսեց ուժեղանալ: Դաշնակցութեան ներքին, դուա կուսակցական կեանքի աշկոծուեաները, որ այժմ արդէն խիստ բնորոշ

արտայայտութիւն էին ստացել՝ մէկ և ընկակցիայի ազգեցութիւնը մի ուրիշ կողմից, քատիպեցին նրան ձեռք վերցնել ամէն տեսակի սոցիալիստական—քաղաքական գործողութիւններից և գրադել՝ սոսկ «գումման», օքիւրեղաց ման գործով: Սակայն իրերի գրութեան հետ աւելի մօտ ծանօթ մարդկանց համար պարզ էր, որ դա ոչ թէ զտում կամ քիւլիդացում էր, այլ միայն... լիկվիդացիա—

Կառավարութեան բռնի ոյժի վրայ իր ազգեցութիւնը յենող բուրժուազիան, որ առ ժամանակ այդ ոյժից օգտուելու հնարաւորութիւնը չունէր, այժմ խրախճալ կարող էր, որովհետև նորից եկան իր ցանկալի օրերը, նորից ստեղծեց իր տիրապետութեան փառաւոր շրջանը:

Գործարանատէր կապիտալիստների յաղթութիւնը և շիրամապ. գիւղացութեան պարտութիւնը, որի հետ ոչ մի գէպքում չէին ուղում հաշուել պ. պ. Դ-ները—համարելով այդ տարտիկական անյաղողութեան հետեանք—ոչ թէ թերահաւատ ենթադրութիւն էր այժմ, այլ անողոք իրականութիւն, կատարած փաստ:



Մենք տեսանք Դաշնակցութեան գերը շերամապահ գիւղացութեան և գործարանատէրերի յորձանուա յարաբերութիւնների ժամանակ, տեսանք թէ նա ինչպէս «սոցիալիստ» համարելով իրեն, մի շնորք հակայեղափոխական գործեր կատարեց՝ առևտրական կոմերսնացիաների մէջ մտնելով գործարանատէր բուրժուաների հետ և մինչև իսկ զէնք հանդիսացաւ նրանց ձեռքին՝ ապաստելու աշխատաւորական այնպիսի մի հստ մեծամասնութիւն, ինչպիսին ներկայացնում է իրենից թուրք շերամապահութիւնը:

Տեսանք, որ գործարանատէր բուրժուազիայի անսահման շահատակութիւնների հեղեղատի ժամանակ դաշնակցութիւնը, որ պատերազմական փողեր հնչեցնելով էր մտել սաշխատաւոր ժողովրդի շարքերը դասակարգայնապէս կազմակերպելու նրան, ոչինչ չուեց այդ աշխ. ժողովրդին, նրա և գործարանատէրերի յեղյեղուկ յարաբերութիւնները տակաւին մնացին նոյնը. որոշ քրիստական սահմաններ շատեցան այդ, յարաբերութիւնների շուրջը:

Սակայն, նա մի ուրիշ բան սովորեցրեց այդ աշխատաւորութեանը. «կայրենք գործարանները, գործարաններում աշխատող բանւորութիւնը դուրս կաննը բռնի կերպով» և մի շարք այնպիսի անիշխանական, հակայեղափոխական, հակասոցիալիստական և հակակուրաքական աննշէնցներ, որոնք աշխատաւորութիւնը ի-

դէտպէս այլասերել կարող են միայն և անար-
խիայի գիրկը նեւեր

Շերամապալաների և դրա հետ ամբողջ
աշխատաւոր գիւղացիութեանն զատախարակ-
ման և մտածողութեան մակարդակը ճիշտ այդ
գրութիւնն էր ներկայացնում, երբ սկսեց
Դեան լիկվիդացիան, իր ամբողջ լայնութեամբ
ու խորութեամբ:

Այժմ արդէն մէջտեղից վերացել էր այն կա-
մուջը, որը կապում էր շերամապալաներին գործա-
րանատէրերի հետ, այժմ նրանք մենակ պիտի
կուէին կապիտալիստների դէմ, խիստ երե-
բուն ու խախուտ հոգ ունենալով իրենց ոտնե-
րի տակ, խիստ կասկածելի ոյժ ու հմուտու-
թիւն զգալով իրենց մէջ:

Շերամապալաները պիտի ըմբռնէին այժմ
իրենց անուժութեան և միայնակութեան ամ-
բողջ վտանգը: Նրանք պէտք է որոնէին, զբո-
նէին այն ձևը, թէ ի՞նչպէս կազմակերպել ու
կենտրոնացնել իրենց ջանքերը, ի՞նչպէս զու-
գաւորել ու կապակցել իրենց եռանդը, որ կա-
րողանան մի բէսլ ոյժ ստեղծել և հակադրել
նրան գործարանատէր բուրժուազիայի անօր-
ինակ շահատակութիւններին:

Նրանք պիտի հասկանային վերջապէս,
որ հատուկային կոպիտ սպանալիքներն ու
պահանջները չեն այն նամակաւորը, որը կա-
րող է տանել դասակարգային կուի նստում-
ների դուռը, այլ այն սեփական ոյժն ու ան-
դրուելի կամքը, որոնք զոխում են շերամա-
պալաների (հայ և թուրք). համերաշխ, ճիշտ
ըմբռնած ու գիտակցած խելացի գործելա-
կերպից:

Ա. Սուրէն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՈՒՄ

I

Մոշոր կապիտալիստական արդիւնաբեր-
ութիւնը վաղուց է, որ մուտք է գործել
Կովկաս Արդիւնագործութեան նոր կապիտա-
լիստական ձևը իւր անխուճափելի գրոշմն է
դնում անդական ժողովուրդների հասարա-
կական, տնտեսական, կուլտուրական կեանքի
վրայ: Նա յեղադրում է հինը՝ փոխարինելով
այն նորով: Օրհասական կախ է տեղի ունե-
նում հին ու նոր արդիւնաբերութեան ձերեթ
մէջ. փրկութեան միջոցներ են հնարում:
Քայքայող դժբախտաբար այդ բոլորը ի դերն են
եղում կապիտալիզմի առաջ, Նա, կապիտա-
լիզմը, անողոք կերպով շարունակում է իւր
ընթացքը առանց խղճահարելու պարտաճ-
ների հեծկուտումից:

Կապիտալիզմը իւր զարգացման ընթաց-

քում ցոյց է տալիս հասարակական այն դա-
սակարգերն ու զէնքերը, որոնցով ինքը պիտի
վերջնականապէս յաղթէ:

Մոշոր բուրժուազիա և սեփականագուրկ
պրոչիտարիատ. սրանք են այն հասարակական
կաթէզօրիաները, որոնց առաջ է բերել զարգա-
ցած կապիտալիզմը: Սրանք իրենց հերթին
հանդիսանում են իրրե իրար հակասող, իրար
միտող, թէ շահերով և թէ հոսկացողութիւն-
ներով հասարակական տարրեր: Սրանցից մէ-
կի պարտութիւնը միւսի յաղթութիւնն է
մէկի տիրութիւնը՝ միւսի ուրխութիւնը:

— Գարզ է, որ բուրժուազիան, իրրե կա-
պիտալիզմի անմիջական տէր ու տնօրինող
իւր սկզբնական քայլերում յաղթող է, իսկ
պրօլետարիատը՝ իրրե սեփականագուրկ ու
անկազմակերպ մի մասսա պարուօղ:

Սակայն տեսնելը, թէ ինչու բուրժու-
ազիան յաղթում է, իսկ պրօլետարիատը— ոչ:

Կապիտալիզմի յաղթութեան այդ դրա-
ւականները պիտի որոնել նրա առանձնա-
յատկութիւնների և հասարակական այն պայ-
մանների մէջ, որոնց մէջ նա ծնւում է:
Ամենից առաջ զարգացած ու արդիւնաբերող
կապիտալիզմը պահանջում է զարգացած ու
իրենց շահերը խոր կերպով ըմբռնող կապի-
տալիստներ, մի հանգամանք, որ ինքն
ըստինքեան որոշ չափով ապահովում է նրանց
յաղթանակը: Եւ երկրորդ՝ կապիտալիստները
տէր լինելով մի շարք հասարակական ֆունկ-
ցիաների, հիմնարկութիւնների կարողանում
են հեշտութեամբ և առանց արդելքի վարել
այնպէս, ինչպէս պահանջում են իրենց դա-
սակարգային շահերը: Կապիտալիստի դասա-
կարգային շահերը պահանջում են անասնման
շահագործում, բարոյական, ֆիզիքական
ստրկացում և դրա հետ միասին աղաւտ քա-
ղաքական կարգեր: Այսօր մենք յաճախ ա-
կանատես ենք լինում այդ բոլորին, մենք
տեսնում ենք թէ ինչպէս կապիտալիստները
ձգտում են սղաւտ սահմանադրական կարգիչի,
թէ ինչպէս նոքա տէր են արդիւնագործու-
թեան միջոցներին ու արդիւնքին և թէ ինչ-
պէս նոքա անխնայ կերպով ծծում են աշխա-
տաւորութեան յաւելիւ աղծէրը:

Կապիտալիզմի զարգացման դուզընթաց
մենք տեսնում ենք անող ու զարգացող սե-
փականագուրկ բանտրութիւն, որոնց թիւը
քանի զնում սուտարանում է զոյսութեան պայ-
մանները՝ խախուտանում:

Սեփականատէր ու արդիւնաբերող
բուրժուազիայի շահերը պահանջում են ան-
կազմակերպ ու սեպական շահերը չըմբռնող
բանտրութիւն: Այս հակասական պրօլետու-
ները մենք տեսնում ենք կապիտալիստօրէն

զարգացած ժողովուրդների մէջ, եւ նոյն այդ զարգացած վայրերում տեղի ունեցող հասարակական փոփոխութիւնները պալիս են հաստատելու, որ շահագործողների պահանջներին ու նրանց հովանաւորող հիմնարկութիւններին պիտի հակադրել հակառակը—աշխատաւորական հիմնարկութիւնները, իրենց պահանջներով:

Սակայն պիտի խոստովանել, որ մեր բանւորութիւնը այդ ուղղութեամբ մինչեւ այժմ ոչինչ չի արել, որ նա ղեւ ապրում է իւր հին աւանդութիւններով, հասկացողութիւններով, որ նա ղեւ շարունակում է իւր յոյսն իւր անհատական ոյժերի վրայ դրած աշխատել սեփական բարօրութիւն ու ապահով կեանք ստեղծել, նա ղեւ այս բոլորը վերագրում է մի ինչ որ վերին զորութեան, որի պահանջներին իրջիր էլ լինին, չպիտի հակառակել այլ յարմարել: Բայց կապիտալիզմի ամբողջ պատմութիւնն ու պահանջները ցոյց են տալիս, հաստատում են, որ այս բոլոր անհատական երկ Պ. Չանքերը ոչնչի չեն կարող հասցնել, այլ պատճառ կը դառնան աւելի ու աւելի քայքայելու:

Կազմակերպւած բուրժուազիայի դէմ պիտի դուրս գալ կազմակերպւած ու սեփական շահերը խորը գիտակցող աշխատաւորութեամբ: Բուրժուական հիմնարկութիւնների դէմ պիտի դուրս գալ աշխատաւորական հիմնարկութիւններով: Բուրժուական բարոյակառուցիչները և քաղաքականութեանը պիտի հակադրել աշխատաւորական բարոյակառուցիչն ու քաղաքականութիւնը:

Աշխատաւորութիւնը իւր կախիւ յաջող կերպով մղելու համար, պիտի դիմի գործաւանին. ձայնակցի այն բոլոր պահանջներին որոնք թելադրում են նորա սեփական դասակարգային շահերը Իսկ բանւորութեան դասակարգային շահերը թելադրում են, որ նա ուրիշ մի շարք բանւորական հիմնարկութիւններին կից ստեղծի աշխատանքի սններ:

Այժմ տեսնենք որոնք են աշխատանքի տները, ինչ գրգայատճառներ ունեն և որչափ են նպաստում բանւորութեան դասակարգային կուր յաղթանակին:

Գործազրկութիւնն ու անգործութիւնը կապիտալիստական արդիւնորդութեան անմիջական հետևանքն են:

Յաճախ է պատահում, որ տարածակ հասարակութիւնը աշխատաւորներու ամիսներ, նոյն իսկ տարիներ շարունակ պարապ ու քաղցած թափառում են պանազան աշխատանքի վայրեր, բայց չեն կարողանում գործ գտնել: Յաճախ է տեղի ունենում նաև այն կրկնվելը, որ կապիտալիստական արդիւնարդութեան շրջանում

անապատելի կերպով հազարաւոր աշխատաւորներ միանգամից հեռացւում են գործից, որոնք իրենց հերթին մասնւորաւ են անգործութեան ու սովի:

Եթէ մենք հեռու չդիտենք և մեր շուրջը նայենք, կրտսնենք այն բոլորը, ինչ վերին շխտայինք, այսինքն և՛ անգործութիւն, և՛ գործազրկութիւն: Նրանք, որոնք զէթ մի անգամ եղել են Բալախանու կամ Բիրք-Նէյրութի բանւորական կազմաւանդում կենդանի վիտաներ կարող են լինել այն բաղձաթիւ անգործներին, որոնք իրենց բախտակից ընկերների մօտ ապաստան են դուրս գալ: Կամ նրանք, որոնք սովորութիւն ունեն աշխատակալ անկապնելու տեղական լրացիւնները՝ կը կարգան այն քաղմաթիւ գործազրկներին մասին, որոնց տիրող անտեսական ճշմարտութիւնը դուրս է վանում աշխատանքի վայրերից:

Այդպիսով գործազրկութիւնն ու անգործութիւնը բազի այն բանից, որ սարսափելի կերպով ազգում են հէնց իրենց բարոյական ու Ֆիլիքականի վրայ, միւս կողմից գյուղ են աշխատավարձի գինը չափաւոր, քայքայում են բանւորական միութիւններն ու կազմակերպութիւնները: Այս բոլորից, ի հարկէ, կրկին պատում է արդիւնարդական բուրժուազիան:

Չարգացած կապիտալիստական երկրներում բանւորութիւնը վաղուց է գիտակցել այդ եւ արդէն դուրս է կուր այն եղանակը, որով կարողանում է կուր անգործութեան ու գործազրկութեան դէմ: Նա այդ նպատակով ստեղծել աշխատանքի տներ, որոնց միջոցով կարողանում է, իւր անգործ ընկերներին համար աշխատանք գտնել:

Աշխատանքի տների անցումն ու ներկան ցոյց են տալիս, որ նորա բանւորական շարժումների ընթացքում անպիսն օգուտ են հասցնում: Աշխատանքի տները բազի զուտ շահադիտական նշանակութիւնից, ունեն և ուրիշ նշանակութիւններ. նորա անազին զարկ են տալիս բանւորների համիրաշխութեան, փոխազարմ օգնութեան: Այդպիսի միութիւններում բանւորութիւնը սովորում է ինքնուրոյն կերպով պրծել, վատանանալ իր անանական ոյժին ու նախաձեռնութեանը: Այդ տիպի վայրերում է, որ ուրոշ շափով մշակում է աշխատաւորական իրիւրդիւնը:

Ենկ

«ԱՆԿՈՒՄ ԱԿՑԱԿԱՆ» ՈՊՏԱՌՈՂ ԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Աշխատաւոր դասակարգը իւր կախիւ

յաջող դարձնելու համար կապիտալի դէմ, հիմնում է իւր սեպհական աշխատաւորական հիմնարկութիւնները և այդ հիմնարկութիւններէ միջոցով կուուսւմ ամբողջակաբար կապիտալի դէմ:

Ընդհանուր աշխատաւորական դասակարգային շահերը միատեսակ լինելու պատճառով, որպէսզի նրանց կոխել էլ յաջող լինի իրենց դասակարգային շահերի տեսակէտից, պէտք է որ նրանց աշխատաւորական հիմնարկութիւններն էլ լինի անկուսակցական, որպէսզի ամբողջ բանւորութիւնը առանց ազդի և կուսակցական խտրութեան կարողանայ մտնել այդ հիմնարկութիւններէ մէջ, և երկրորդ՝ պէտք է որ ամեն մի աշխատաւորական հիմնարկութիւն հիմնի աշխատաւորութիւնը իր ինքնատիւութիւնով: Առանց այս երկու գլխաւոր հանգամանքների, ոչ մի բանւորական կուռ չի կարող յաջող ելք ունենալ, և ոչ մի բանւորական հիմնարկութիւն չի կարող կեանք ունենալ:

Կուսակցական կամ ազգային ոգով հիմնուած աշխատաւորական հիմնարկութիւնների մէջ ազատ մուտք կարող են ունենալ միմեային կուսակցական կամ ազգային բանւորութիւնը, որոնք այդպիսով բաժանուած լինելով ընդհանուր բանւորական մեծ ընտանիքից, իրենց կոխել էլ կապիտալի դէմ անպայման պէտք է մղեն բաժան-բաժան, և բացի գրանից նրանք պէտք է կուեն մրցման միջոցով և հակառակ հիմնարկութեան հետ այդպիսով ուրեմն իրենց ոյժը պիտի բաժանեն միաժամանակ երկու Ֆրոնտի վրայ, որից ոչ մի ոգուտ չի կարող ստանալ բանւորութիւնը:

Արեւմտեան Աւրոպայի աշխատաւորական հիմնարկութիւնների 90 տոկոսը սովորաբար մտնում է, որովհետև հիմնուած է լինում կամ կուսակցական ու ազգայնական հողի վրայ, և կամ առանց բանւորական ինքնատիւութեան, այսինքն կուսակցական կամ ազգային ինտելիգենտ ինտելիգենտի նախաձեռնութեամբ, որոնք բանւորութեանը ապշորդում են այնպէս՝ ինչպէս իրենց կամքն է թելադրում: Սա մի ճշմարտութիւն է, որը հակադէմ են բոլոր իսկական և ոչ դիմակաւորուած սոցիալիստները վազուց ի վեր: Այս բանը չէ՛ կամենում հասկանալ միմեային նայիծնալ դէմօկրատիան, որը հանդէս է գալիս Բազում «Տրուդ» անկուսակցական սպառողական ընկերութեան կողքին իւր սեպհական «անկուսակցական» «Յառաջ» սպառողական ընկերութիւնով:

Ինչ երեք տարի առաջ, երբ Ռուսաստանի բանւորութիւնը շարժելու իւր անդուլ շանքերի կարողացաւ ձեռք բերել վերջնապէս մարտի չորսի ազխատած օրէնքը, այդ իրեն

սոցիալիստ հռչակող նայ, դէմօկ. օգուելով մասսայի տգիտութիւնից, սկսեց «կազմակերպել» Տիխիսում անկուսակցական միութիւններ իւր կուսակցական դրօշի տակ, գերադասելով կուսակցականը-անկուսակցականից: Այդպիսով նրան յաջողում է իւր շովինիստական ցանցերի մէջ գցել բանւորութեան մի պատկանելի թիւ, բայց շուտով յուստիափուսում է: Առանց բանւորութեան ինքնատիւութեան, լոկ իրեն նախաձեռնութեամբ սկսած գործը, ինչպէս որ էլ պէտք էր սպասել, քայքայում է ու ասպարէզը մնում է դատարկ:

Նացիոնալ դէմօկրատ. «կազմակերպիչով» աշխատաւորական հիմնարկութիւններ կուսակցական դրօշի տակ, մի նպատակ ունի միայն՝ անջատել հայ բանւորութիւնը միջազգային բանւորութիւնից, յետ կուսակցի նրան քաղաքական շարժումից ի «փառս» հայ ազգի ու հայ բուրժուազիայի:

Այն օրից անցել է արդէն երեք երկար ու ձիգ տարիներ: Իրերի դրութիւնը այդ մասնակամիջոցում բոլորովին փոխել է ի վնաս նայ. դէմ. նրա վարկը արդէն ընկել է գիտակից բանւորութեան ու ինտելիգենցիայի առաջ: Նայ. դէմ. գիտակից մասան թէ բանւոր և թէ ինտելիգենտ, արդէն համարեա թէ հեռացել են ու հեռանում են, ասպարէզը թողնելով նայ.՝ դէմ. ուղն ու ծածը կազմող մի քանի ինտելիգենտներ: Նրա առաջ ծառայած, կանգնած է մի կոնկրետ հարց. լինել թէ չլինել: Այս հարցը նրա համար կեանքի և մահի խնդիր է: Նրա մէջ սպարիւռ տէնչը մեծ է, և նա ստիպւած նորից գառան մորթի է հագնում ու դուրս գալիս աշխատաւորութեան մէջ նրան «հովանաւորելու», նրա շահերը պաշտպանելու» բայց իրապէս նպատակ ունենալով իոկ իւր հակաբանւորական ու շովինիստական ինքնատիւութեան համար հող պատրաստել: Սակայն այս անգամ նա ասպարէզ է իջնում դիմակաւորուած, բայց հաւատացած լինելով, որ յաջողութիւն չի ունենալու եթէ ոչ բոլորովին, գտնէ գիտակից մասսայի մէջ:

Մեր առաջն է նայ. դէմ. մի յայտարարութիւնը, որտեղ նա կոչ է անում նախաշխարհի տրուդը քան բանւորութեան առանց «կուսակցական և ազգի խտրութեան», անդամադրել կազմակերպելից անկուսակցականը «Յառաջ» սպառողական ընկերութեան: Եւ այժմ մենք հարց ենք տալիս այդ պիմակաւորուած սոցիալիստներին: Արդե՞ք յետին նպատակներով չի նրանք կազմակերպում այդ ընկերութիւնը: Ձե՛ն կեղծում արդե՞ք անուանելով «Յառաջ» սպառողական ընկերութիւնը «անկուսակցական»... Ձե՛ որ արդէն Բազում գոյութիւն ունի «Տրուդ»

սպառողական ընկերութիւնը, որը անկուսակցական լինելով իւր զոնները լայն բացած ունի բոլոր ազգի և համագումարի բանւորների առաջ... Ի՞նչնէ ստիպում նրանց ունենալ իրենց սեպհական սպառողական ընկերութիւնը: Ինչպէ՞ս է պատահել, որ մի սպառողական ընկերութիւն բաւարարութիւն է տալիս կէս միլիոն բանւորութեան Բիբլիոսում: Մի՞թէ բաւարարութիւն չէ տալիս մի սպառողական ընկերութիւնը Բագրի 43 հազար բանւորութեան: Մի՞գուցէ «Տրուդի» նպատակները չեն նրան բաւարարութիւն տալիս:

Տեսնենք:

Մի կողմ թողնենք ընկերութեան նպատակները որը համարեայ թէ ամեն տեղ միևնոյնն է, վերջնենք և բնենք ընկերութեան սկզբունքները, որը Բոլշեւի սկզբունքներ անւամբ է յայտնի:

1) «Տրուդ» ընկերութեան բոլոր անդամները վայելում են հաւասար իրաւունքներ, և ունեն իւրաքանչիւրը մէկ ձայն: Նոյնը ունի գրած և «Յառաջ» ընկերութիւնը իւր թուրքիւրմ. (կէտ 1).

2) Ընկերութեան բաժինները պէտք է լինեն արժան, որպէսզի բոլորին մատչելի լինի: Նոյնը գրում է և «Յառաջը» իւր շրջկէտում:

3) Առհասարակ պէտք է լինի կանխիկ: Նոյնը և «Յառաջի» մաս:

4) Ամեն մի անդամ պէտք է ունենայ սահմանափակ թւով բաժիններ: Նոյնը և «Յառաջի» մաս:

5) Ապրանքի գները պէտք է լինեն չափաւոր: Նոյնը և «Յառաջի» մաս: Իւր այսպէս բոլոր կէտերը համարեայ թէ միևնոյնն են: Բայց և այնպէս նաց. դէմոկ. ցանկանում է իւր սեպհականը ունենալ, որպէսզի ցոյց տայ միջազգային սօցիալիստական բիւրօյին, որտեղ ինքն էլ թիւրիմացութեամբ մասնակցում է, թէ ինքն էլ «սօցիալիստական» կուսակցութիւն է: Բայց դրանով նա կարող է հաւատացնել իւր սօցիալիստականութիւնը միայն ներքաջի սօցիալիստներին, և ոչ թէ իւր թիւ տակ, իրեն կողքին աշխատող սօցիալիստներին:

Եթէ նա սօցիալիստական կուսակցութիւն լինէր ու բանւորութեան շահերի պաշտպան, նա պէտք է կոչ աներ բանւորութեան անդամագրելու արդէն զոյութիւն ունեցող «Տրուդ» սպառողական ընկերութեան մէջ, ինչպէս այդ արիւ և անում են միւս բանւորական կազմակերպութիւնները, և ոչ թէ իւր սեպհականը կազմակերպէր անկուսակցական դիմակի տակ, բայց կուսակցական, որը բան-

ւորական կուլին ոչ մի օգուտ չընդունի հանգործ, բաժանում է բանւորութեանը ըստ ազգութիւնների ու կուսակցութիւնների:

Նա շատ լաւ գիտէ, որ, ինչքան էլ նա իւր կոչերով դիմի բանւորութեան բաժանաց ազգի խարութեան անդամագրելու իւր հիմնարկութիւնների մէջ, լինի նա սպառողական ընկերութիւն թէ արհեստակցական միութիւն, օտար ազգի բանւորութիւնը ընդհանրապէս իսկ հայ բանւորութեան գիտակից մասը մասնաւորապէս, չի մտնում դրանց մէջ նախապէս լաւ նոնաչած լինելով, թէ հոյ է նաց. դէմոկ. և ի՞նչ է ներկայացնում իրենից նրա բանւորական հիմնարկութիւնը: Ուստի նա դիմակաւորած է դուրս գալիս, որպէսզի արդարացի իրեն, թէ ինքն էլ է պաշտպանում միջազգայնութիւնը: Բայց էլ ոչ էլ Այն մասան, որին դուք առաջ այնքան հեշտութեամբ կարողանում էիք գրաւել դէպի ձեզ, մասամբ հայ-թրքական կոտորածի շնորհիւ, այն մասան այժմ չկայ: Այժմ բոլորը գիտեն և նախաչում են թէ հոյ է սօցիալիստս նաց. դէմ. Այժմ նրան մնում է հովանաւորել դիւրից նոր եկած խաւար մասսային: Այլ մասսայի մէջ նրա մանգաղը քարին պիտի դիպչի:

Այս բոլորից յետոյ, գիտակից բանւորութեանն է մնում այդ հակաբանւորական էլեմենտներին իրենց իսկական յատուցումը տալ, կոչ անելով անդիտակից—խաւար մասսային հեռու կենալ «Յառաջ» սպառողական ընկերութիւնից, որը կազմակերպւել է ոչ թէ բանւորութեան ինիցիատուրով, այլ նաց. դէմ. լիգերների անմիջական նախաձեռնութեամբ, որ և հետևապէս չի կարող կոչւել բանւորական հիմնարկութիւն, այլ անդամագրել արդէն զոյութիւն ունեցող անկուսակցական «Տրուդ» սպառողական ընկերութեան մէջ: Լարկաւոր է արթուն լինել, և նաց. դէմ. հակաբանւորական քաղաքականութիւնը իւր ընդ մէջ խեղդել:

Այդ են պահանջում Բագրի, և ընդհանրապէս բոլոր բանւորութեան շահերը:

Kompas

Մ Ա Մ Ո Ի Լ

Աշխատաւոր խանութանների կենտրոնական օրգանը՝ «Գործը» իր 62 համարի մէջ մի յատուկ խմբագրական է ներկել այդ պատւական թերթը թիւրքիայում տարածելու սկիզբի գործին:

Սահմանագրական դրախտի երանելի բընակիչները առգրւել են «Գործ» կարդալու անդիմադրելի աննշանքով և գիւրաբանչիւր

պատը բերում է գրանցից դիմումներ ձրիաբար
թերթ ուղարկելու մասին»:

Ի՞նչ անել Ձրի գրկել անհնարին է, իսկ
չուզարկել—կնշանակէ հրաժարել այն ազգե-
ցութիւնից, որ «Գործն» ունի ազգիս համայն
խանութպանութեան գրայ:

Մտում է մի ելք:

Գործատենչութեան սխառը պահանջին
բաւարարութիւն տալ կարող է միայն հաստ-
բակական աջակցութիւնը: Թերթի օրինակներ
նախընտրով զանազան վայրերի համար կամ գու-
նէ պատային ճանապարհածախարհ եղալով:

Հոյակապ գաղափար—ինչպէս տեսնում էք:

«Հասարակութիւնը» մինչև յիշատակած
խմբագրականի լոյս աշխարհ գալն արգէն կա-
րողացել է զգալ ազգի գերազոյն պահանջը և
տանկանայ խանութպաններին նպաստալի-
մոկրատական լոյսով օղողելու նպատակով նը-
ւիրարելու է մի կլորիկ դուժար:

«Օգտուում ենք ասիթից յիշելու համար—
աւետում է «Գործի», խմբագրութիւնը—որ
այդպիսի նպատակով խմբագրութեանս արա-
ժագրութեան տակ 50 ա. է դրել Բագրի «Ա-
րամազդ» նախարկիւնարեքական ընկերու-
թիւնը»:

«Արամազդը», որ սակարգում է բանու-
րին հասնելիք իւրաքանչիւր կողմէի համար,
որ հիպ ու ջանք է թափում հնարաւորին շագ-
կընտանելու ֆասուածների վարձատրութիւնը,
կապիտալիստական ընկերութիւնների մէջ այդ
ամենից «գիտակից» ընկերութիւնը, այդ «Ա-
րամազդը» Տանկանայաստանի մէջ «Գործ» է
ասրածում:

Ձարմանալու ոչինչ չկայ այստեղ:

Իւրաքանչիւր գասակարգ իր գրական
օրգանն ունի և աշխատում է այդ օրգանի միջու-
ցով որքան կարելի է լայն մասսաներ համախըմ-
բել իր դրօշակի շուրջը:

Հայ բուրժուազիան էլ իր «Գործն» ունի
և ոչինչ չէ խնայում իր թերթը տարածելու
համար:

Հայ աշխատաւորութիւնը ոչինչ չունի
բուրժուազիայի այդ քնքշութեան դէմ դէպի
«Գործը», համարում է այդ զգացումը շատ
անկեղծ ու բնական և կարող է ունենալ մի
ցանկութիւն միայն, որ «Արամազդը» որքան
կարելի է շուտ և որքան կարելի է շատ հե-
տևողներ ունենայ, որպէսզի ամենից մաթե-
րի համար էլ վերջնականապէս պարզի, թէ
ձեւ համար և ինչի համար գոյութիւն ունի
«Գործը»:

ԱՅՆԱՏԱՆՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ՆԱԻԹԱԼԻՍԵՐ Է

Բ Ա Լ Ա Խ Ա Ն Ի

ՄԻՐՉՕԵՆԻ ՆԱԻԹԱԼԱՆՔ (9-րդ դրուպոս)

Այս Ֆիրման վաղուց ք վեր բաժանուած
է թայֆաների թէ ստարչի կանաթօրչիկը, թէ
գաւեպուրչիկն և թէ մեխանիկը ունեն իրենց
թայֆաները—կազմած բանուորներից:

Ամբողջ Ֆիրմայի բանուորները, շնորհիւ
մի քանի բանուորատեայ մարդկանց, շարելի
են մէկ մէկու դէմ և փոխանակ իրանց շահե-
րի համար կուելու, կուում են իրար դէմ: Պ.
մեխանիկը հիմայ դիմել է աւելի խայտառակ
միջոցներէ՝ բանուորական կոխը կանցնելու
համար: Բանուորութեան մէջ գտնուող շատ թէ
քիչ աչքի բնկնող, եակատը բաց սննանսե-
րին զէնք է առաջարկում: Սակայն դիմելով
նրանց ոչ թէ միայն յետ է կանգնեցնում
բանուորական կուից, այլ մինչև անպամ մի
գործիք է դարձնում իւր ձեռքին և ծառայու-
նում նրանց իւր շահելին: Այդպիսիների թը-
ւին է պատկանում նաև նախկին բանուոր,
ներկայումս գարաղուչի Առաքելը, որը ազատ
զէնք է քարձրացնում ամեն մի բանուորի
վրայ: Բանուորութիւնը, շնորհիւ իւր ազիտու-
թեան, մի խայտառակ գործիք է դարձել այդ
թայֆայապահանների ձեռքին և սեփական ձեռ-
քով իւր համար անկասելի կելուով հոր է
փորում: Արգեծք կճանաչի բանուորութիւնը
իւր թշնամիներին վերջապէս թէ ոչ:

Ականատես բանուոր

Բալխանի 10-ին նայեմբերի

Բանուորների կրճատման այն «խորհրդա-
ւոր» պրօցեսը, որ սկսած է ներկայումս
Նախաշխարհում արձագանք գտաւ նաև
«Ռտան» Ֆիրմայում, որի հետևանքը կզա-
Բալխանու գործարանի ամսոյս 17-ին բան-
ուորների յոյսարարած գործադուլը*) կըզաւծ
հետևեալ պատճառներից

Սոյն Ֆիրմայի տեղոյս կառավարիչ Եա-
կուրովիչը, որ մի սոսկալի պատուհաս է
դարձած իւր պաշտօնի մէջ մտած օրից
բանուորների համար, ամսոյս 10-ին յայտնում
է գործարանի արճնատուորներին, որ վճուած
է հեռանալու 43 արհեստաւորներ և 12 հոր
փորող բանուորներից, որոնց ցուցակապրած ս-
նունները վաղը կյայտարարուի նոյն օրը

*) Այս գործադուլին չեն մասնակցում հոր փ-
որող բանուորները համաձայն գործադուլ անողների ս-
րբձան յետի նպատակի համար:

խելոյն և եթ ընդհանուր ժողով գումարելով և ընդունելուս անկելով այդ հարցը, ընտրում են մի յանձնաժողով, ուղարկում կառավարչի մօտ, յանձնարարելով յայտնել, նախ ոչ մի կրճատում չանել, քանի որ գործերը լուս են գնում, իսկ հակառակ դեպքում հետացողները անունները չը ցուցակագրել, այլ թողնել իրենց քանութիւնը իրատարբեան սակ. բայց կառավարիչը պատասխանում է, որ կրճատման մասին նորից խօսելը աւելորդ է գտնում, քանի որ այդ մասին արդէն վերջնական վճիռ է կայացած, իսկ անունները չը ցուցակագրելուն չի համաձայնում: Պարզ է, որովհետեւ իրեն փախազին հասած է համարում, որով հնարաւորութիւն է ունենում փողոց շարահալու այն զիտակից և իրենց շահերը պաշտպանող բանւորներին, որոնք մինչև օրս համարձակութիւն են ունեցել անհանդուրձութիւն պատանակել պ. կառավարչին իրենց պահանջներով:

Եւելով այդ կարուկ պատասխանը, բանւորները յայտարարում են նրան, որ՝ այլ ևս իրեն կառավարիչ չեն ճանաչում՝ ոչ մի բանակցութեան մէջ չեն մտնելու ամեն շանք գործադրելու են՝ թոյլ չտալ իրենց ընկերներին հետացնելու, իսկ յաջողութիւն չունենալով այդ բանում բոլորը միասին կրճատանու: Այսուհետեւ բանակցութեան մէջ է մտնում բանւորների հետ քաղաքի կառավարիչը, որին առաջարկում են բանւորները իրենց վերջնական հետևեալ որոշումը, որ շատ օրավարձ ստացող բանւորները պարտաւորում են աշխատելու մի ամբողջ ամսւայ ընթացքում միայն 16 օր, իսկ քիչ ստանողները 20 օր, այն պայմանով, որ ոչ ոքի չհետացնեն:

Սակայն այս առաջարկը կո մերժւում է «Ռաւանի» բարձր արմինխառնացիայի կողմից որից հարկապարտ բանւորները յայտարարում են ներկայ գործադուլը, ամուր կանգնելով իրենց առաջարկի վրայ:

Չնայած, որ այս ֆիրման այնքան էլ աչքի ընկնող մեծ ֆիրմա չէ, որի գործարանի բանւորների թիւը հասնում է մօտաւորապէս 80 հոգու՝ բազկացած մեծի մասամբ ուսանելից և չնչին տոկօս պարսիկներէից, սակայն նախահանրում աչքի են ընկնում իրենց դասակարգային գիտակցութեամբ և համերաշխութեամբ:

Բայց թէ ինչ վերջաւորութիւն ու հետևանք կունենայ այդ գործադուլը դա միանգամայն կախւած է իրենց բանւորների համերաշխութիւնից հաստատակամութիւնից, իսկ մեզ մտում է միայն յաջողութիւն բարեմաղթել մեր բարեսակից առս և պարտիկ ընկերներին

այդ կառւում, նրանց ներկայ կրիտիքական մօտեցումով: Ջիւսեղիբի

Թ Ի Բ Ի. 2 Է Յ Ր Ա Յ

Նայեմբերի 28-ին՝

Սրանից մի քանի օր առաջ, Մանթաշնի նախահանրի 57-րդ մասի մեքենայապիտի օգնական Պատաական Փաշոյեանը, թոյլաւթիւն է խնդրում մեքենայապիտից՝ մի քանի ժամով քաղաք գնալու, կորիտը գործի համար: Գնալուց նա աննապարհին պատահում է իր ծանօթներից մէկին, որը յայտնում է նրան, նրա Ղուբայում ցանուող փէսի սպանութեան լուրը: Փաշոյեանը այդ սոթաբեր լուրը լսելուց գնում է երկաթուղու կայարանը և հետախօսով կամենում է կառավարչից թոյլաւթիւն խնդրել Ղուբա գնալու համար, սակայն այդ չի յաջողում նրան:

Նա ճանապարհւում է Ղուբայ և երկու օրից յետոյ վերադառնալով, պատմում է իրողութեան մասին կառավարիչ պ. Իւզբաշեանին և ընդունւում գործի: Սակայն, այդ Փաշոյեանից է ժամ չէ նստում, Ամսոյս 21-ին նա հագլու մօտենում է ժառանգակցի դռան, յանկարծ վրան են թափում մի քանի իրանց «սօցիալիստ» անւանող բանւորներ և սկսում ցաւալի հարուածներ հասցնել նրան: Ի՞նչ հարցին՝ թէ ինչու էք այդ բանւորին ծեծում նրանք պատասխանեցին—մենք ընկերական պատիժն ենք ի կատար ածում:

Ինչո՞ւ, մը մեզքի համար—յայտնի չէ: Սակայն, որքան և մեղաւոր լինէր նա, այնուամենայնիւ այդ հանգամանքը իրաւունք չպիտի տար նրանց այդօրինակ բարբարոսութիւն գործադրել նրա վրայ:

Բանւոր ընկերներ, ժամանակ է, որ վերջապէս հասկանանք և ուրիշներին էլ հասկացնել տանք, որ մենք ևս մերդիկ ենք և ամէն տեղից վեր կենողը իրաւունք չունի մեզ կենդանիների տեղ գնելու, ծեծելու, բռնանալու մեզ վրայ և այլն:

Ժամանակ է, որ մենք կազմակերպւած ոյժով և զիտակցութեամբ զինւած հանգէս գանք և պաշտպանենք մեր բանւոր ընկերների մարդկային իրաւունքները:

Բանւոր Միթաւեղ

Թրե-Նէլթաթ, 28-ին Նայեմբերի

Նախկին Նաքաթեանի նախահանրում անա 24 օրէ որ գործադուլ է: Թիրմայի պ. կառավարիչը բանւորներին 12 ժամ է բանեցնում, որից բանւորները ստանում են միայն 8 ժամւայ աշխատավարձը, իսկ չորս ժամը ա-

անոց աշխատավարձի. են աշխատում: Եթէ բան-
ւորը համարձակուած է կառավարչին ստեղծ,
որ աւելորդ աշխատած օրավարձը տայ, այն
ժամանակ պ. կառավարիչը թնիցը բռնում և
փողոց է հեռացնում ստեղծի՞ դա թնչպէս ես
համարձակուած ու այդ խօսքը՝ ասում: Բանւոր-
ները նկատելով, որ կառավարիչը օր-օրի
վրայ աւելացնում է իր անմարգագայիկ հըն-
շումները՝ յետ է՞լուում բանւորների տրեան
գնով ձեռք բերած իրաւունքները, մտածում
է կամ մի անգամից ընկնել, կամ վերջ տալ
այս անարգար վարմունքներին: Այդ ժամին
բանւորական խառն ժողովը վճռում է պա-
հանջներ մշակել և ներկայացնել Ֆիրմայի
ներկայացուցչին՝ խօզէինին:

Ֆիրման պահանջներին բաւարարութիւն
չէ տալիս և բանւորութիւնը ստիպւած է
լինում գործադուլի միջոցով կուել այդ պա-
րոնների հետ:

Բանւորների պահանջները սրանք են՝
ա) ունեւալ ուսումնարան ինչպէս առաջ եղել
է. բ) 8 ժամ բանւորական օրից աւել չբան-
ցնել, իսկ քանացնելու դէպքում աւել ժամերի
վարձը տալ. գ) Ֆիրմայից դուրս ապրող բան-
ւորներին տալ սենեակավարձ և ճանապարհ-
ձախտ. դ) օրավարձ ոչ մի բանւոր չըբանա-
ցնել. ե) նագրադներ տալ առաջւայ կարգով:

Անցորդ

Ք Ա Ղ Ա Ք

Բազմաբնակ պ. Բրիտանափոք Բաբա-
կանը իր կնոջ մահւան տարեդարձի յիշա-
տակը յարգելու համար տասը (10) օրինակ
«Շնկոր» է նւիրել զանազան տեղեր ուղար-
կելու նպատակով:

Քաղիկի պատժում գտնուող Պրա-
գերի արհեստանոցում աշխատող դերձակները
երկուշաբթի ամսոյս 24-ին ներկայացրել են
արհեստանոցի տիրոջը հետեւեալ պահանջները:

Տալ բոլոր արհեստանոցի աշխատաւոր-
ներին հաշիտեարներ, որտեղ գրւած լինի
հատով կարելու աւած կտորների արժէքը:

Չարձակել դերձակ աշխատաւորներից և
ոչ մէկին, առանց արհեստանոցում աշխատող
ընկերների ընդհանուր համաձայնութեան:

Նոյն կերպ վարել նաև նորերին ընդու-
նելիս:

Ոչ սեղծային ժամանակներում, երբ
արհեստանոցում պակասում են պրտաւէրները,
կարող կտորները տալ արհեստաւորներին
ներթոյ՛, իսկ բոլորովին չեղած դէպքում, իւ-
րաջանչիւք ընտանիքաւոր արհեստաւորի տալ,
յար. 13 ր. իսկ ոչ ընտանիքաւորին — 3 ր.,
նորոգել բոլոր կարի հին մեքենաները,

իսկ օրոնք անպէտք կըհամարեն աշխատա-
ւորների կողմից: փոխարինել նոր մեքենանե-
րով:

Արհեստանոցի մէջ կախած ունեւալ հա-
տով կարող կտորների սակագները:

Այս պահանջներին աւելացրած է եղել
արհեստանոցում աշխատող բանւորութեան ա-
րողումը-գործադուլի յայտարարել բաւարարու-
թիւն չտրւած դէպքում

Բոլոր յիշեալ պահանջներին պ. Պրա-
գերը բաւարարութիւն է տւել ամբողջովին և
պարտաւորել է իրագործել մինչև շաբաթ օրը
— ամսոյս 29ը:



Ք Ոչ մի դասակարգ այսքան չէ շահագործ-
ւում, որքան այսպէս կոչւած «սաօրօժները»:
Չուրկ լինելով միանգամայն դասակար-
գային գիտակցութիւնից, նրանք շարունակ ի-
րարից բամբասում են, թէ մեծ և թէ փոքր,
բազայիս առաջ քննում, աշխատելով որքան
կարելի է նուրբ կերպով բաւարարութիւն
տալ նրա կապրիզներին: Նոյն քծնութիւնը
նրանք բանեցնում են ամեն մի գրասենեակ
յանհախող օրարինին», որպէսզի ընաչայս ըս-
տանան:

Ընկերներ, այդպէս շարունակել գի-
տէք թէ ուր կտանի ձեզ լինելով խաղալիք
խաղէյինների ու կառավարիչների ձեռքին,
դուք խաղալիք էլ կմնաք, բանի որ նրանք
ձեր կողմից ոչ մի ընդմագրութիւն չեն տես-
նում:

Ամենայաւ ձեռ այդ խայտառակ դրութիւ-
նից դուրս գալու համար— գա անկուսակցա-
կան արհեստակցական միութիւնն է, որի մէջ
և առաջարկում ենք կազմակերպել:

Թող ոուս, հայ, թուրք, վրացի բոլորն էլ
հաւաքւեն և հիմնեն իրենց միութիւնը: Թող
ուսնան իրենց գրադարան— ընթերցարանը,
որպէսզի ազատեն «սպաների» տւած հազար
ու մի ֆթած հէքիսթներից ու «Պղնէ քաղա-
քի» պէս պատմութիւններից: *)

Եթէ այսօր բուրժուազիան զօրեղ է— գա
մեծ մասամբ շնորհիւ նրա կազմակերպ լինե-
լուցն է: Նրանց դէմ կուելիս, համար դուք էլ
պէտք է կազմակերպւաւ. լինեք գրա մէջ է ձեր
ոյժը:

Չտարէք զանազան նեղ կուսակցական
արհեստակցական միութիւններով, որովհետև
այդպիսով դուք միայն թշնամութիւն սերմա-
նած կլինէք օտարազգի գրասենեակային ծա-
ռայողների մէջ:

*) Արհեստաւորութիւնը ունի իր շահերն համա-
պտասխանող գրքայինք ու թերթեր. որանց պէտք է
զուք կարգաք:

Լաւ ըմբռնեցէր, որ ազան ընաշայտներով ձեզ կուրացնուած է, գործիք դարձնելով իր ձեռքին:

Սթափւելցէր, ընկերներ, կազմակերպուցէր անկուտակցական արհեստակցական միութեան մէջ:

Զանգեղաբայի

Ք Ղ Ք Ա Կ Յ Ո Ւ Յ Ի Ի Ն Ն Ե Ր

ԷԼԷՔՏՐԱԿԱՆ ԲՍՆԻՈՐԸՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

II.

Քրֆլիս, նոյեմբերի 12-ին.

Նախանորեալ նամակովս (տես Շեփոր 12) գրել էի, ինչպիսի թէ շափազանցութեան են հասել կառավարիչ Ալիբէկովի օտանձգութիւնները: Վերջերս աչքի են ընկնում վարչութեան կողմից եղած «արդիւնաւէտ» կարգադրութիւնները և նրանց գործադրութիւնը պ. Ալիբէկովի կողմից, աջ թե ոգնենալով արբանեակներ -ի գէմս կօնտրոլեօր նիկոլանի, կառապան Սկօբելի և ընկ.:

Մինչև պ. Ալիբէկովի կառավարիչ հաստատուելը բանւորներս վարչութեան կից ունէինք առանձնասենեակ, որտեղ հաւաքուած էինք խորհելու մեզ վերաբերող զանազան ընթացիկ խնդիրներէ մասին: Ալիբէկովի կառավարիչ լինելու օրից, նա վճռել էր միանշա՛մայն վերջ տալ այն «անմիտ զարաստովկաներին ու պահանջներին», որոնք վճռուած էին բանւորների կողմից այդ առանձնասենեակում: Այս իսկապէս նա իր նպատակին հասաւ:

Կառավարիչ Ալիբէկովի օրերում թի՛ կարող է առաջնորդ հանդիսանալ և հաւաքել բանւորներին մի որևէ հարցի վերաբերմամբ խորհելու նպատակով, թէ՛ կուզ այդ հարցը տնտեսական-քաղաքական շահերին բոլորովին չըզեքարբուէր, ուր մնաց, որ առանձին սենեակ ունենանք, որտեղ պիտի ընկէինք ներկայ ըէ՛ծիմը, անտեսական տաղնապը և մեր վերաբերմունքը:

Կառավարիչ Ալիբէկովի օրերից ի վեր չենք ստանում նաև այն ամաթերթիքն ու օրաթերթիքը, որոնք այս կամ այն ուղղութեամբ պաշտպանում են բանւորներին տնտեսական-քաղաքական շահերը, որովհետև վարչութիւնը չէ բարեհաճում վճարել բաժանօրգափճարը: Նորերն ստանալու մասին խօսք անգամ չի կարող լինել:

Այժմ մեր գրադարան-ընթերցարանում կզանէք գլխավորապէս այն ուղղութեամբ թերթեր, որոնք միմիայն ինքք, պ. Ալիբէկովի և իր արբանեակներն են կարգում: Մրանցից մի քանիսը արժէ յիշել՝—«Новое время»,

«Новый Свѣтъ», «Кавказъ» և այդպիսի մի շարք յետադիմական թերթեր: Տեղական ազատամիտ թերթերից մի քանիսը մինչև այժմ էլ ստանում ենք, բայց հաւանական է, որ սրանք էլ նոր տարւանից նոյն վիճակին ենթարկեն, որին ենթարկել են մայրաքաղաքից ստացւող ազատամիտ թերթերը:

Կամաց կամաց «մաքրում են» անյուսալի տարրերին: Մի որևէ բանւորի (այլազգի) կողմից «ուրու միութեան» անդամներին յանդիմանութիւն կամ հասարակ պատասխան տալը, որ շատ յանախ է պատահում գործի ժամանակ բանւորների մէջ, բաւական է արդէն:

Նրանք, իբրև «կարմիրներ», պիտի նրկատւեն դրանց կողմից (խուլիգաններէ), նախ մի լաւ ծիծի ենթարկին ու յանձնեն ուր հարկն է:

Քանի՛, քանի այդպիսի անմեղ բանւորներ զո՛ւ են գնացել և դեռ գնում են այդ երէշներին:

Իսկ «կարմիրներին» փոխարինում է վարչութիւնը «ուրու միութեան» անդամներով, որոնք յատուկ կնքւած նամակներով են ներկայանում: Փաստերով լիքն է առօրեայ կեանքը:

Վարչութիւնը և բոլոր մուխ ու հակաբանւորական տարրերը հրճուած են, տեսնելով իրենց «չաղթանակը»:

Բայց այդպիսի հրճանքն ու յաղթանակները, որոնք դրւած են խախուտ հիմքերի վերայ, չեն կարող երկարատև լինել, պիտի վերջ ի վերջոյ տեղի տան այն աշխատաւոր դասակարգին, որի սեփական աշխատանքի պատուը իւրացնելով հրճուած են այդ ձրիակներները:

Գիտակցօրէն կազմակերպւած դասակարգային կոխն, է ու վերջ է՛յտալու այդ բոլորին և որին պիտի ձգտենք մենք բոլոր գիտակից աշխատաւորներու:

Կանդիտեր Կրպօ

ԿՈՒՍՍԱԿԱՆ ԿԻՆՂ (Ձիւանչիբի գաւառ).

Ինչպէս Ձիւանչիբի գաւառի քաղժաթիւ ուրիշ վայրերում նոյնպէս և մեր գիւղում արդէն սկսել են զլուխ բարձրացնել հասարակական տականքները և օգտուելով ընդհանուր աննօքմալ պայմաններից, իրենց զգացնել են տալիս:

Գլխաւորապէս այս տարւայ գիտու առաւելութիւնը ստեղծել է մի սուկալի չորիք, որից հրապարակ է կկել ուսուցակութիւնը, գողութիւնը և մանաւանդ մարդասպանութիւնը, որոնք փայլուն «անցեակիտ» տրաքներէ շարքն են դասուած ու թունաւորում մեր հասարակական հանգստութիւնը, որովհետև մարդիկ

տեւեռում են, թէ կարելի է շատ հեշտ կերպով յարգուրդ ասլ իրենց վաշիչ անմաստ օր բընազգն՝ րին: Թէ և մեր պիւրում մաւր տարանութիւնը ժամանակակից տաւ՝ իրութ՝ մն համար մի մեծ թիւ չի կազմում, սակայն մի պիւրում որպիսին է կուսակաւորը, արդէն մի աչքի ընկնող երևոյթ պէտք համարչի:

Թէ որքան քառմեկի է վարչնորար է կատարել այն վերջին տեղի ունեցած սպա տութիւնը, ընթերցողը կարող է պատկերացնել իրեն հետեւեալ փաստից:

Ներկայումս գիւրում աստիճանական գիտութեան արհեստագործութիւններին, մէկն էլ տեղի է ունենում նոյնմեր ամառն սկզբներին՝ ներսէս Ամիրբեանցի տանը, որտեղ բայի մի քանիսն էրին ներկայ է լինում նաև գիւրում «նաշակաւոր» Գարսասիւլ՝, որքայապակ բաւականութիւն շատանալով, առաջնորդում է օյզ արքան՝ խմբին գէպի իւր մօրաբարձ տանը, որտեղ զեռ նոր սարոցէնը՝ շահած, վէճ է բացում ն. Ամիրբեանցի և Ռ. Զախարբեանցի մէջ, որի հետեւեալը լինում է այն, որ վերջինըս դաշտին երկու նարածով տեղն ու տեղը սպանում է ն. Ամիրբեանցին: Այդ բանը տեսնելով սպանածի հօր եզրու որչին, փայտի մի քանի հարեաներով վերաւորում է Զ-ցին զըլից, բայց վերջինս փախչելով ազատում է: Այս ոճրագործութիւնը տեսնելով, միւս զինուոր խմբի անդամները ես իսկոյն հոտում, են թողնելով արեւուշաղախ դիպի վրայ, ընկած սպանածի կնոջը և հինգ փարիկ երեխաներին ուշաթափած մինչև՝ որ գիւղից մի քանի մարդիկ գալիս են օգնութեան, նրանց դիակից բաժանում: Ապանածը մի աղքատ, կաւէ ամաններ պատրաստող քանուր էր և ինքն էր միակ նեցուկը իւր բազմանգամ ընտանիքի: Իսկ սպանողը նոյնպէս մի բազմանգամ ընտանիքի միակ կերակրողն է, որը այժմս ինքը ներկայանալով օտարականութեան ձեռքակալում է: Սակայն այսօրւանից երկու անբախտ բազմանգամ ընտանիքների ընկնում են թշուառութեան մէջ շնորհիւ իրենց հայրիցի գինեւորութեան:

Իսկ փացած «գինեւորները» դեռ շարունակում են իրենց «բէյիբը», որոնք հաւանականօրէն տեղիք կտան նոր օտակալի գէպերի:

Բայց պէտք է աշխատել շնորհելու գիւղացիներին վարակելու այդ պարազիտներից և պէտք է կուել այդպիսիների դէմ և մենք

*) Այս գինեւոր պարանը երբեք տարին է ոչ մի աշխատանքի չի գիտում, ամբողջ օրերով գիւղացիների շնորհ կտրած գինի է խնդրում, իսկ իւր պատու մօրը և այրիացած քրոջ անից պարս զանգիով թողել է նրանց զառն ճակատագրին:

հաւատացած ենք, որ այդ բոլոր գազիր երեւոյթների դէմ դուքս պէտք է գայ ինքը գիւղացիութիւնը՝ կազմակերպած ու բարեւած կանգով և ամեն ջանք պէտք է գործադրէ մեր հասարակական միջավայրը ստույգացնելու համար: Զ—ցի

ԲԱՆԻՔԻՆԵՐ ԳԻՒՂ (Ղուպ. գաւառ.)

Նոյնի. 23-ին

Գիւղումս 1907 թւականից սկսած մինչև որս գոյութիւն ունի սպիւղական սպառողական խանութ: Էրմասպիւրների կողմից կատարելաներ են նշանակել նախկին վաշխատուելի՝ պ. պ. Յովսէփը և Ա.էտը:

Ննորհիւ այդ պարանների բանած ուղղութեան խանութը չի կարելի տարրերել մասնաւոր սպիւքանիցօ, չնայած որ սպիւղացիութիւնը աւելին էր սպասում իրրե—հասարակական սպառողական խանութ:

Մտտ օրնրս զիւրի գիտակից ընկերներից մի քանիսը կաճեանում են խանութի գործավարութիւնը կանոնաւորել և այդ տարիւ ժողով են հրաւիրում գիւղացիներին, որտեղ վըճաւում է, հաշիւները ստուգելով և ստանալով, նրանց հոտացնել իրրե անօղտակար և անպարտաճանաչ մարդկանց ու տեղերը ընտրել տեղի բանիմացներին:

Հասարակութեան որոշումը յայտնում են պ. պ. Յ.—ին և Ա.—ին: Սակայն նրանք ստանց բաշխելու պատասխանում են.—Արա է՛յ, ինչ հասարակական խանութ, ինչ հաշիւ, ինչ ընտրութիւն, ինչ էք ասում. հասարակութիւնը մեզ փող է տուել, մինք էլ նրա տւած գումարը մաս—մաս կը վերադարձնենք իրան:

Ահա ընթերցող Բաշքենդ գիւղի սպառողական խանութի այժմեան դրութիւնը. իսկ թէ ինչ կրնի սպասույում՝ կգրեմ:

Օնիկ.

Պ Ո Ս Տ Ա Ր Կ Ղ

ՇԱՀԱՔ ԳԻՒՂ. Բանուր Սիւնեցուն—Ձի տարի: ՇԱՀԱՔ ԳԻՒՂ. Ի. յ. թողեցուն.—Ձի տարի. գրեք գիւղացիութեան անտեսական դրութիւնից: ՅԻՔԻ—ՂԱՅԱՔ. Բաւեցրին.—Կարգացրինք: Յաւում ենք կատարած դէպքի համար մասնաւոր է—չի տարի: ԲԱՅԱՔԱՆԻ. Բէախախն. Մտէր խմբագրատուն:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍԵՆԻՐԱԿ ՇԱՀ-ՊԱՐՈՆԱՆ
Редакторъ издатель:
Седракъ Шахъ-Паронянъ